



Երևան, 26 Մայիս, 2025

## ՏԵՐՈՒԱԿԱՆ ԱՊՈՔԵ

(միասնաբար արտասանուած)

Իմասկութիւն Հօր Յիսուս, գուր ինձ իմասկութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՃԱՐՍԿԱՆ

**Յամենայն ժամաղաշանկ իմայս են,**

**ի մեղաց իմոց սուրբ արար զիս տէր:**

### ԱՊՈՔԵ

Մեր հոգիները դէպի քեզ կը բարձրացնենք, ով Աստուած, որովհետեւ դուն ես մեր լոյսն ու կեանքը. ողորմէ՛ մեր միտքը Քու լոյսովդ, որ կարող ըլլանք Քեզ ներկայացնել աշխարհի մէջ: Կապէ՛ մեր կեանքը Քու կեանքիդ հետ, որ Քեզմէ զօրութիւն առնենք եւ այնպէս ապրինք որ մարդիկ մեզ տեսնելով Քու սուրբ անունդ փառաւորեն: Ամէն:

### ՃԱՐՍԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

**Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ ամմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ:**

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վբանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցոր: Վասն լսելի լինելոյ Տեառն Ասպուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Ասպուծածնին, եւ իշանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գլութեան Տեառն Ասպուծոյ: Ամենակալ Տէր Ասպուծ մեր, կեցն՝ եւ ողորմեա:

### ՃԱՐՍԿԱՆ - ԱՊՈՔԵ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**

**Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:**

**Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:**

**Արի Վաստուած Հարցն մերոց, որ ապաւէս ես նեղելոց:**

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեղ ողորմեա:**

**Պահապան ամենայնի Քրիստոս,  
ազ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի զիշերի,  
ի նստիլ ի տան, ի զնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յանել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՝ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:**

## ՍԱՂՄՈՍ 82

**ԱՍՏՈՒԱԾ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆԸ**

Աստուած կանգնած իր երկնային ատեանին մէջ,  
դատի կ'ենթարկէ դատաւորները.-  
«Դուք մինչեւ ե՞րբ անիրաւութեամբ պիտի դատէք,

աչառութիւն պիտի ընէք ամբարիշտներուն:  
Տկարներուն ու որբերուն իրաւունքը պաշտպանեցէք,  
արդարութիւն ըրէք տառապեալին ու կարօտեալին:  
Ազատեցէք տկարն ու չբաւորը,  
փրկեցէք զանոնք ամբարիշտներուն ձեռքէն:  
Բայց ոչ գիտէք, ոչ ալ կը հասկնաք.  
դուք խաւարի մէջ կը խարխափիք,  
եւ ձեզի հետ աշխարհը կործանումի կը տանիք:  
Եւ ես կ'ըսեմ.- Դուք՝ որ «աստուածներ» էք,  
դուք՝ որ Բարձրեալին որդիներն էք,  
սակայն դուք ալ պիտի մեռնիք ոեւէ մարդու նման,  
հողի պիտի վերածուիք՝ ոեւէ իշխողի պէս:»  
Եկուր ով Աստուած, եւ դուն դատէ աշխարհը,  
որովհետեւ բոլոր ազգերը քեզի կը պատկանին:

### ՕՐՈՒԱՆ ՆԻԹԸ



ՍԱՂՄՈՍ 82

### ԱՍՏՈՒԱՅ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆԸ

Սաղմոս մը, որուն բովանդակութիւնը երբեք ալ ժամանակ չի ճանչնար, այլ ընդհակառակը, բոլոր ժամանակներու համար ըստուած աղօթք-խնդրանք է երբ մարդկութիւնը կը դառապի նոյնինքն մարդուն ձեռքով եղած անարդարութենէն: Անա ճիշդ այս անարդարութենան համար է, որ Աստուած իր ներկա-յացուցիչները դրաւ մարդկութեան մէջ որպէսզի արդարութեամբ դապեր դեսնին ու դեսնեն, բայց երբ ներկայացուցիչը կը մոռնայ, թէ որուն ներկայացուցիչն է, այն ժամանակ արդէն ուղղութիւնը շեղած ու կորսնցուցած է: Այս, մարդկութիւնը որքան ալ կը դառապի, ինչպէս անցեալին, նաև այսօր անարդարութենէն, որուն հիմնական ու միակ պարճառը ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուածոյ ներկայութեան բացա-կայութիւնը: Այս Սաղմոսը նաև յիշեցում է, որ Աստուած ինք է միակ ու ճշմարիք Դապաւորը, ու ամեն-նակարեւորը կը յիշեցնէ դապաւորներուն, թէ իրենք որ այժմ նապած են դապաւորի աթոռին, պիփի զայ ժամանակը որ իրենք ալ պիփի դապուի: Հետեւաբար, յիշեցում է, որ ըստ այնմ իրենց պարտականութիւննը կապարեն:

Սաղմոսերգու Ասաֆ, այս անգամ իր Սաղմոսը կը գրէ, այն ինչ որ կը դեսնէ իր շուրջը, անիրաւութիւն, անարդարութիւն: Այս Սաղմոսը կը գրէ, նաև յիշեցներով իրեն ժամանակակից, եւ այսօրուան դապաւորներուն, թէ երբ դապարանի մէջ դապեր կը դեսնեն, կայ Աստուածոյ աչքը որ զիրենք կը դիմէ: Այս, մի գուցէ, անմիջապէս, դեղն ու դեղոր Աստուած չի դապեր, չի պարթեր, բայց Ասաֆ կը յիշեցնէ, որ պիփի զայ ժամանակը երբ Աստուած իր երկնային ավեանին մէջ դապի պիփի կանչէ բոլորը, այս պարագային անոնք, որոնք իր ներկայացուցիչներն էին ու են երկրի վրայ: «Մինչեւ ե՞ր» արդարայլութեամբ, Ասաֆ կը ներկայացնէ, որ արդէն երկար ժամանակէ ի վեր անիրաւութեամբ, ու մանաւանն կաշառակերութեամբ դապեր կը դեսնեն: Փոխանակ դկապին ու որդին իրաւունքը պաշփառնելու, դառապեալին ու կարօքեալին արդարութիւն ընելու: Ամբարիշքը կայ, բայց նաև կայ դապաւորը, որպէս Աստուածոյ ներկայացուցիչը իրաւունքը պաշփառնելու անոր որ դկարը, որք է, դառապեալ եւ կարօքեալ: Բայց եթէ հարցնենք, ինչո՞ւ տես ըներ, այն ինչ որ կոչուած են ընելու, որովհետիւ հաւարի մէջ կը խարիսխին, եւ ոչ միայն իրենք, այլ նաև աշխարհը իրենց հետ միասին կործանուի դասնելու:

Ասաֆ կը յիշեցնէ նաև որ անոնք Բարձրեալին որդիներ կոչուած են, առաւել եւս «աստուածներ»: Այսպես՝ «աստուածներ» արդարայպութիւնը, կը վերաբերի դապաւորներու, որուն մէջքերումը նաև Քրիստոս կօգպազործէ, երբ առիթով մը Օրէնքի ուսուցիչներն ու փարիսեցիները կը ըննադարին Քրիստոսի այն խօսքին երբ ինքինքն Հօր Աստուածոյ հաւասար դասեց: Օրէնքի ուսուցիչներն ու փարիսեցիները զայրացած զինք մետաղեցին բակով, թէ հայիոյութիւն կ'ընէ: Քրիստոս այս Սաղմոսը մէջքերելով յիշեցուց, թէ չէ որ դուք ալ, այսինքն՝ ձեր մէջ դապաւորները «աստուածներ» կոչուած են: Ուրեմն, ինչո՞ւ զիս կը մեղադրէք: Բայց Ասաֆ կը շարունակէ բակով. որքան ալ Աստուածոյ որդիներ կը կոչուիք, որքան ալ «աստուածներ» էք, բայց աւարփին նոյն մահը պիփի ունենաք այնպէս ինչպէս ունէ մէկ մարդ, հողի պիփի վերածուիք, այնպէս ինչպէս ունէ մէկ հշխող: Այսինքն՝ յադ կոչումը, այդ պարագանութիւնը որ դրուած է, նաևս կը զգուշացնէ, որ չի շահագործուի, այլ ըլլայ իրաւ ճշմարիք Դապաւորին ներկայացուցիչ: Այլապէս նոյն վախճանը պիփի ունենայ այնպէս ինչպէս ունէ մէկը:

Ի վերջոյ, Ասաֆ կը խնդրէ, որ Աստուած ինք զայ եւ դապէ աշխարհը, որովհետիւ այն անձինք որոնք ներկայացուցիչը ըլլալու կոչուած էին, ալ չեն: